11.08.2026 թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի սպառող,

հիմք ընդունելով Ձեր կողմից Ընկերությանը ներկայացված միացման հայտը՝ կից Ձեզ է ներկայացվում համապատասխան պայմանագրի կնքման առաջարկը:

Համաձայն Պայմանագրի՝

*- ընդհանուր միացման վճարը կազմում է՝ 1007000.00 ՀՀ դրամ(**կից Պայմանագրի հավելված N1**),*
- որից Կանխավճարը կազմում՝ 511000.00 ՀՀ դրամ:

Կանխավճարն անհրաժեշտ է փոխանցել «Արդշինբանկ» ՓԲԸ-ի 2474690651609660 բանկային հաշվեհամարին սույն Պայմանագրի կնքման առաջարկը ստանալուց 15 աշխատանքային օրվա ընթացքում, որի չվճարումը կհամարվի միացման հայտից հրաժարում և չի տրվի հետագա ընթացք:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 0292214

Միացման պատվեր N 145827111

ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

_____ _____20___թվական

(կնքման վայրը)

Բաշխողը (Երաշխավորված մատակարարը)՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ, ի դեմս ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝ ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ, ում անունից 01/01/2026թ. թիվ ԼԱ-01/26 Լիազորագրի հիման վրա հանդես է գալիս ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ԼՈՒՍԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ մի կողմից, և Սպառողը՝ ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ, մյուս կողմից, համատեղ կոչվելով կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» ՀՀ րենքով, այլ ռենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններով (այսուհետ՝ ԷՄԱ կանոններ), էլեկտրաէներգետիկական բաշխման ցանցային կանոններով (այսուհետ՝ ԷԲՑ կանոններ) և այլ իրավական ակտերով, կնքում են սույն պայմանագիրը միասին (այսուհետ՝ Պայմանագիր), որը գործում է ստորև շարադրված պայմաններով:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն Բաշխողը միացնում է Սպառողի ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ , ք.ԵՂԵԳՆԱՁՈՐ, ՇԱՀՈՒՄՅԱՆԻ փող. 22 հասցեում գտնվող նոր կառուցվող կամ վերակառուցվող ոչ կենցաղային նշանակությամբ 99 կՎԱ հզորությամբ սպառման համակարգը (այսուհետ՝ սպառման համակարգ) էլեկտրական ցանցին (այսուհետ՝ էլեկտրական ցանցին միացում) և Սպառողին մատուցում է Մատակարարից գնված էլեկտրական էներգիայի բաշխման ծառայություն կամ իրականացում է էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարում, իսկ Սպառողը վճարում է իր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման (բացառությամբ ԷԲՑ կանոններով նախատեսված դեպքերի), իրեն մատուցված բաշխման ծառայության, ինչպես նաև երաշխավորված մատակարարման դիմաց:

2. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2. Սպառողի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարը (այսուհետ՝ միացման վճար), կազմում է 1007000.00 դրամ, որից կանխավճարը՝ 511000.00 դրամ (այսուհետ՝ Կանխավճար), ներառյալ ԱԱՀ՝ համաձայն սույն պայմանագրի N1 հավելվածի:

3. Սպառողը Կանխավճարը Բաշխողի կողմից սույն պայմանագիրը կնքելու առաջարկը ներկայացնելու պահից՝ 15 աշխատանքային րվա ընթացքում փոխանցում է Բաշխողի՝ սույն պայմանագրի վավերապայմաններում նշված միացման վճարի համար նախատեսված բանկային հաշվին:

4. Բաշխողը էլեկտրական ցանցին միացումն ապահովում է պայմանագրի կնքմանը հաջորդող 130 աշխատանքային րվա ընթացքում (նշված ժամկետը չի կարող գերազանցել ԷԲՑ կանոններով տվյալ միացման համար սահմանված առավելագույն ժամկետը): Հանձնաժողովի կողմից ԷԲՑ կանոններին համապատասխան միացման ժամկետի երկարաձգման դեպքում սույն կետում նշված ժամկետները համարվում են երկարաձգված Հանձնաժողովի կողմից երկարաձգված ժամկետի չափով:

5. Միացման վճարի ընդհանուր գումարի և կատարված Կանխավճարի տարբերությունը Սպառողը վճարում է Բաշխողին էլեկտրական ցանցին միացման համար վերջինիս դուրս գրած հաշվարկային փաստաթղթի հիման վրա՝ էլեկտրական ցանցին միացմանը հաջորդող ամսում՝ սպառվող էլեկտրաէներգիայի դիմաց վճարման համար ԷՄԱ կանոններով սահմանված ժամկետում, իսկ այն դեպքերում, երբ Բաշխողը ավարտել է միացմանն ուղղված աշխատանքները, սակայն Սպառողը ԷԲՑ կանոններով սահմանված կարգով

չի ապահովել էլեկտրաէներգիայի ընդունումը և Բաշխողը ծանուցել է Սպառողին դրա մասին, Բաշխողի կողմից հաշվարկային փաստաթուղթը ենթակա է դուրսգրման, իսկ Միացման վճարի ընդհանուր գումարի և կատարված Կանխավճարի տարբերությունը Սպառողի կողմից ենթակա է վճարման Բաշխողի կողմից Սպառողի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվելուն պատրաստ լինելու վերաբերյալ ծանուցելուն հաջորդող ամսում: Սույն կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու պարագայում Սպառողի էլեկտրամատակարարումը կարող է դադարեցվել ԷԲՑ կանոններով սահմանված կարգով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Պայմանագրի համաձայն կողմերն ունեն այն բոլոր իրավունքները և պարտականությունները, որոնք նախատեսված են ԷՄԱ կանոններով և ԷԲՑ կանոններով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

7. Սույն պայմանագիրը կնքված է համարվում Բաշխողի կողմից Սպառողին պայմանագիր կնքելու առաջարկը պատշաճ ներկայացնելու պահից 15 աշխատանքային րվա ընթացքում Կանխավճարը վճարելու պահից:

8. Սույն պայմանագրով սահմանված՝ էլեկտրական ցանցին միացմանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում Սպառողի կողմից Կանխավճարը վճարելու պահից և գործում են մինչև սույն պայմանագրի 1-ին կետով ամրագրված սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացմանը վերաբերող Կողմերի պարտավորությունների ամբողջական կատարումը: 9. Սույն պայմանագրով սահմանված՝ էլեկտրական էներգիայի բաշխմանը և (կամ) երաշխավորված մատակարարմանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում էլեկտրական ցանցին Սպառողի առաջին փաստացի միացման պահից,

10. Սույն պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով, բացառությամբ՝ ԷՄԱ կանոններով սահմանված դեպքերի: Եթե ԷՄԱ կանոններով տվյալ դեպքի համար նախատեսված է ժամանակավոր պայմանագրի կնքում, ապա դրա գործողության ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ կողմերից յուրաքանչյուրը կարող է ծանուցել մյուս կողմին պայմանագրի գործողության դադարեցման մասին: Եթե ժամկետի ավարտից հետո Սպառողը Բաշխողի ծանուցման բացակայությամբ շարունակում է սպառել էլեկտրական էներգիա, ապա պայմանագրի գործողությունը համարվում է երկարաձգված՝ նույն պայմաններով և նույն ժամկետով՝ բացառությամբ ԷՄԱ կանոններով նախատեսված դեպքերի:

11. Հանձնաժողովի կողմից սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրի նոր րինակելի ձև հաստատվելու կամ դրանում փոփոխություններ, լրացումներ կատարվելու դեպքում Հանձնաժողովի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից կնքված պայմանագրերըհամարվում են նոր կամ փոփոխված ձևին համապատասխան կնքված, կամ փոփոխվա

12. Սույն պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ,

2) Սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին Բաշխողին տեղեկացնելու, ինչպես նաև մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց ամբողջությամբ վճարելու պայմանով, իսկ Մատակարարի Սպառողի դեպքում՝ մատուցված բաշխման ծառայության դիմաց ամբողջությամբ վճարելու պայմանով,

3) Բաշխողի կողմից միակողմանի՝

ա. Սպառողի կողմից կանխավճարը սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված ժամկետում չվճարելու, սույն պայմանագրի 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն այն հետ պահանջելու, դեպքերում՝ ընդ որում պայմանագիրը համարվում է լուծված համապատասխանաբար կանխավճարի վճարման ժամկետի ավարտի կամ այն հետ պահանջելու րվան հաջորդող րը,

բ. ԷՄԱ կանոնների համաձայն որոշակի ժամկետով կնքված պայմանագրի գործողության ժամկետի ավարտվելու դեպքում՝ այդ մասին ժամկետը ավարտվելուց մեկ ամիս առաջ Սպառողին ծանուցելու պայմանով,

գ. սպառման համակարգի տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի դեպքում, եթե Սպառողը չունի ԷՄԱ կանոններով պահանջվող տարածքի (շենքի,

շինության) նկատմամբ իր իրավունքները հավաստող փաստաթուղթ՝ Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով, բացառությամբ ԷՄԱ կանոններով նախատեսված դեպքերի,

դ. բնակիչ Սպառողի մահվան, իրավաբանական անձ Սպառողի լուծարման դեպքում,

ե. ԷՄՇ կանոնների համաձայն Որակավորված սպառողի կարգավիճակ ստանալու դեպքում,

զ. ռենքով, ԷՄԱ կանոններով, սույն պայմանագրով և Հանձնաժողովի այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով:

13. Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրում փոփոխություններ կարող են կատարվել գրավոր՝ պայմանով, որ չեն հակասի Հանձնաժողովի կողմից հաստատված և գործող ռինակելի ձևին և Հանձնաժողովի այլ իրավական ակտերին:

14. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

15. Կողմերը պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում ռենքով, ԷՄԱ կանոններով, ԷԲՑ կանոններով, ինչպես նաև սույն պայմանագրով սահմանված կարգով և դեպքերում:

16. Սույն պայմանագրով սահմանված ժամկետների խախտման դեպքում Բաշխողը պարտավոր է Սպառողի պահանջով վերջինիս վճարելու տույժ՝ կետանցի յուրաքանչյուր ռրվա համար էլեկտրական ցանցին միացման վճարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան միացման վճարի ընդհանուր գումարը, իսկ ԷԲՑ կանոններով տվյալ ժամկետի խախման համար տույժ նախատեսված լինելու դեպքում՝ անկախ Սպառողի կողմից նման պահանջ ներկայացնելու հանգամանքից՝ ԷԲՑ կանոններով սահմանված չափով և կարգու

17. Միացման վճարի և կանխավճարի տարբերությունը վճարելու՝ սույն պայմանագրի 5-րդ կետում սահմանված ժամկետը խախտելու դեպքում Բաշխողն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ կետանցի յուրաքանչյուր ռրվա համար՝ միացման վճարի և կանխավճարի տարբերության 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան միացման վճարի և կանխավճարի տարբերության չափը:

18. Սպառողը պարտավոր է չգերազանցել սույն պայմանագրի 1-ին կետով սահմանված սպառման համակարգի հզորությունը, ինչպես նաև Բաշխողի (Երաշխավորված մատակարարի) հետ համաձայնեցնել սպառման համակարգի հզորության փոփոխությունը:

19. Բաշխողը սպասարկման որակի պահանջների խախտման դեպքում պարտավոր է ԷՄԱ կանոններով և ԷԲՑ կանոններով սահմանված կարգով Սպառողին վճարել տույժ:

20. Որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրական էներգիա բաշխելու համար Բաշխողը փոխհատուցում է Սպառողի կրած վնասը ռենքով սահմանված կարգով:

21. Բաշխողի (Երաշխավորված մատակարարի) որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիա մատակարարելու համար պատասխանատվություն չի կրում այն ժամանակահատվածում, որի ընթացքում Սպառողը գերազանցել է սպառման համակարգի հզորությունը:

22. Սպառողը պարտավոր է ապահովել փոխանջատումներ կատարելու իրավունք ունեցող Բաշխողի պերատիվ անձնակազմի շուրջ ռյա անարգել մուտքը իր տն ռինության տակ գտնվող տարածքներ՝ իրենց իրավասությունների սահմաններում պարտականությունների կատարման նպատակով.

23. Սպառողի (բացառությամբ բնակչության) կողմից սույն պայմանագրի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Բաշխողն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր ռրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը: Տույժը կարող է հաշվարկվել հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 20-ից, եթե դրանից առնվազն 7 ռ առաջ ԷՄԱ կանոններով սահմանված կարգով տեղեկացրել է Սպառողին նրա կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի, իսկ Մատակարարի Սպառողի դեպքում՝ մատուցված բաշխման ծառայության քանակի և արժեքի մասին: Հակառակ դեպքում տույժը հաշվարկվում է ԷՄԱ կանոններով սահմանված կարգով տեղեկացնելուց ոչ շուտ, քան 7 ռ հետո:

24. Առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով Սպառողի կողմից էլեկտրաէներգիա սպառելու դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

25. Կողմը պայմանագրային պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չի

կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Ֆորս մաժոր համարվող դեպքերը, ինչպես նաև դրանց կիրառման կարգը սահմանվում է ԷԲՑ կանոններով:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

26.Սույն պայմանագրում հասկացություններն ունեն «Էներգետիկայի մասին» ռենքով, ԷՄԱ և ԷԲՑ կանոններով սահմանված նշանակությունը, եթե այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ սույն պայման

27. Պայմանագրով Սպառողը համաձայնություն է տալիս ԷՄԱ և ԷԲՑ կանոնների համաձայն իր կողմից ներկայացված անձնական տվյալները հասանելի դարձնել այլ անձանց (այդ թվում՝ բանկերին, վճարահաշվարկային կազմակերպություններին)՝ ԷՄԱ կանոնների համաձայն մատակարարված (բաշխված) էլեկտրական էներգիայի դիմաց տեղեկությունը հասանելի դարձնելու, ինչպես նաև ռենքով և սույն պայմանագրի շրջանակում Բաշխողի կողմից ստանձնած պարտավորությունները կատարելու համար:

28. Կողմերի միջև առաջացող բոլոր վեճերը (տարաձայնությունները) կարգավորվում են բանակցությունների միջոցով: Վեճը (տարաձայնությունը) կողմերի համաձայնությամբ չկարգավորվելու դեպքում կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել Հանձնաժողով՝ վերջինիս իրավասությունների շրջանակում վիճարկվող հարցերը լուծելու խնդրանքով կամ վեճի լուծումը հանձնել իրավասու դատարան, եթե կողմերի համաձայնությամբ չի որոշվել գործը հանձնել արբիտրաժի լուծմանը:

29. Սպառողի էլեկտրամատակարարման միագիծ սխեման, Սպառողի (ենթասպառողի) առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի, Սպառողի (ենթասպառողի) սնման ուղղության, լարման, սպառման համակարգի հզորության, Բաշխողի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման համակարգի սահմանազատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման, տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորությունների վերաբերյալ տվյալները ներառված են Սպառողի հաշվառման քարտում:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1) Միացման վճարի հաշվարկի մասին N1 հավելվածը:
2) 6 (10) ԿՎ լարման սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմաններ մասին N2 հավելվածը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բաշխող՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝
ք.ԵՐԵՎԱՆ, Ա.ԱՐՄԵՆԱԿՅԱՆ 127
Հեռախոս
Էլ. փոստ office@ena.am
ՀՎՀՀ 01520882
Միացման վճարի հ/հ 2474690651609660
Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման հ/հ
Բանկ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Գործունեության լիցենզիա ՊԼԱ-01/26
ԼՈՒՍԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

_____ (ստորագրություն)

Սպառող՝ ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝
ՀՀ ԵՐԵՎԱՆ , ք.ԵՐԵՎԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ փող. 130
Ծանուցման հասցեն՝ ՀՀ ԵՐԵՎԱՆ , ք.ԵՐԵՎԱՆ,
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ փող. 130
Էլ. փոստ ainfin@mail.ru
Հեռախոս 37410 587125
ՀՎՀՀ (իրավաբանական անձի դեպքում) 02882913
Բանկ ՀՀ ՖԻՆ.ՆԱԽ.ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/հ 900011042471

ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿ

1. Միացման վճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$ՄՎ = Վ_{ստ} + Վ_{լրաց} + Վ_{պահուստ} + Վ_{շթ} - Վ_{հկ}$$

որտեղ՝

$Վ_{ստ}$-ն միացման վճարի ստանդարտ բաղադրիչն է, որը կազմում է 1120000.00

$Վ_{լրաց}$-ը միացման վճարի լրացուցիչ բաղադրիչն է, որը կազմում է _____

$Վ_{պահուստ}$ -ը պահուստային սնում ապահովող էլեկտրահաղորդման գծի և ենթակայանի կառուցման միջին արժեքն է, որը կազմում է _____

$Վ_{շթ}$-ն շինթույլտվության ստացման համար տեղական տուրքերի և վճարների հանրագումարն է, որը կազմում է 15000.00

$Վ_{հկ}$-ն նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմած համար վճարն է, որը կազմում է 128000.00

2. Կանխավճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԿՎ = Վ_{շթ} + \frac{Վ_{ստ} + Վ_{լրաց} + Վ_{պահուստ} - Վ_{հկ}}{2}$$